

## ՌՈՒՍԱՍՏԱՆ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանի Դաշնությունը բնակչության թվով Եվրասիայի վեցերորդ պետությունն է, աշխարհի այն փոքրաթիվ երկրներից, որտեղ «**ժողովրդագրական ճմեռ է**», այսինքն՝ Ռուսաստանի բնակչության բնական աճի ցուցանիշը բացասական է (-0,3%):

Հատկանշական է, որ Ռուսաստանը, ունենալով բնակչության բնական աճի բացասական ցուցանիշ, աչքի է ընկնում մեխանիկական շարժի դրական ցուցանիշներով: Դա նշանակում է, որ բնակչության զանգվածային ներգաղթը գերազանցում է արտագաղթին, և 2011թ. անցկացված մարդահամարի արդյունքում բնակչության թվաքանակի մի փոքր ավելացումը պայմանավորված է նաև դրանով: Միաժամանակ, վերջին տարիներին ծնելիության խրախուսմանն ուղղված պետական քաղաքականությունը (յուրաքանչյուր երեխայի համար ընտանիքին տրվող միանվագ դրամական նպաստները, բազմազավակ ընտանիքներին անհատույց բնակարանների հատկացումը և այլն) զգալիորեն կրճատեցին բնական աճի բացասական ցուցանիշները:

Մեծ քանակությամբ ռուսներ Ռուսաստան են վերադառնում հետխորհրդային անկախացած երկրներից՝ հատկապես Ղազախստանից, Ուզբեկստանից, Ուկրաինայից: Ռուսաստան են գալիս ԱՊՀ երկրների այլ ազգերի ներկայացուցիչներ ևս՝ ուզբեկներ, տաջիկներ, ադրբեջանցիներ, հայեր: Մեծ թիվ են կազմում այլ երկրներից ներգաղթող այլազգիները (Չինաստանից, Եթովպիայից, Սոմալիից, Իրաքից):

Ռուսաստանում նկատելի է նաև արտագաղթի երևույթը: Երկրից հեռանում են գերմանացիները, հրեաները, նաև մեծ թվով ռուսներ:



Ծնելիությունը Ռուսաստանում, 2012թ. (1000 մարդու հաշվով)

Ի տարբերություն ներգաղթողների, արտագաղթողների մեջ շատ են բարձրագույն կրթությամբ մասնագետները: Դա նշանակում է՝ Ռուսաստանը կորցնում է իր գիտական ներուժի մի մասը: Արտագաղթում են հիմնականում Հյուսիսային Ամերիկայի և Եվրոպայի զարգացած երկրներ:

Էական փոփոխություններ է կրում բնակչության **սեռատարիքային** կազմը: Նոր ծնվածների թվի նվազումը բերում է երիտասարդների տեսակարար կշռի նվազման և բարձր տարիք ունեցողների տեսակարար կշռի ավելացման: Այդ երևույթը հայտնի է «բնակչության ծերացում» անունով:

Ռուսաստանն աչքի է ընկնում նաև բնակիչների, հատկապես տղամարդկանց, կյանքի ոչ բարձր միջին տևողությամբ (66 տարի): Դրա գլխավոր պատճառներն են բնակչության ոչ բարձր կենսամակարդակը և ավելի չափազանց շատ օգտագործումը:

Շատ խայտարեղ է բնակչության **ազգային կազմը**:

Ռուսաստանի ներկա տարածքում պատմականորեն բնակվել են տարբեր ցեղեր, ազգեր ու ժողովուրդներ: Բազմազգությունը մշտապես եղել է Ռուսաստանի բնակչության բնորոշ հատկանիշը:

Ներկայումս Ռուսաստանում բնակվում են ավելի քան 100 ազգերի ու ժողովուրդների ներկայացուցիչներ, որոնք իրարից տարբերվում են լեզվով, ապրելակերպով, սովորույթներով, պատմական ավանդույթներով, ազգային մշակույթով, դավանանքով:

Ռուսաստանի Դաշնության **գերակշռող ազգը ռուսներն** են: Նրանք կազմում են երկրի բնակչության ընդհանուր թվի ավելի քան 81 %-ը: Համեմատաբար մեծաքանակ բնկի ազգությունները, որոնք զբաղեցնում են ընդարձակ հավաք տարածքներ, Ռուսաստանի կազմում ունեն իրենց կիսանկախ քաղաքական տարածքային կազմավորումները: Դրանք նախորդ դասից ձեզ հայտնի հանրապետությունները և ազգային օկրուգներն են:


Հանրապետություններից դուրս գտնվող բոլոր տարածքներում ռուսները բացարձակ գերակշռություն ունեն:

Ռուսաստանի Դաշնության՝ քանակով երկրորդ ազգությունը **թաթարներն** են (5,5 մլն մարդ): Հաջորդում են **ուկրաինացիները** (4,4 մլն մարդ), այնուհետև՝ չուվաշները (1,8 մլն մարդ), բաշկիրները (1,3 մլն մարդ), դադստանյան ժողովուրդները և մյուսները:

Տեղաբնիկ ազգային փոքրամասնությունների մեջ քիչ չեն այնպիսիք, որոնց թիվը հաշվվում է մի քանի հազարով ու նույնիսկ հարյուրներով: Օրինակ, Սիբիրի հյուսիսում բնակվում են ավետիները՝ ընդամենը 500 մարդ:

Ռուսաստանի Դաշնության արմատական ժողովուրդները պատկանում են չորս տարբեր **լեզվաընտանիքների**՝ հնդեվրոպական, ավթայան, կովկասյան, ուրալյան: Բնակչության ճնշող մեծամասնությունը (80 %) պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին:

Դուք, իհարկե, հիշում եք, որ հնդեվրոպական լեզվաընտանիքում բավականին մեծ տեղ են գրավում **սլավոնական ազգերը**: Նրանք բաժանվում են 3 խմբի՝ արևելասլավոնական, արևմտասլավոնական և հարավսլավոնական: Արևելյան սլավոնների (և ընդհանրապես սլավոնների) մեջ ամենամեծաքանակը և ամենատարածվածը ռուսներն



են: Նրանք հատկապես մեծ գերակշռություն ունեն Ռուսաստանի Դաշնության եվրոպական մասում (բացառությամբ Վոլգա գետի միջին և ստորին հոսանքների ավազանների), Ուրալում, Սիբիրի հարավում և Հեռավոր Արևելքում:

Այթյալ լազվարնտանիքի թուրքական լեզուներին պատկանող ժողովուրդներից են թաթարները, բաշկիրները, չովաշները, յակուտները և այլն:

Բնակչության ամենախայտաբղետ ազգային կազմ ունեն Մերձվոլգյան շրջանը և Հյուսիսային Կովկասը: Ինչպես հստակ երևում է Ռուսաստանի վարչաքաղաքական բաժանման քարտեզից, հենց այդ շրջաններում էլ գտնվում է ազգային հանրապետությունների մեծ մասը:

Ռուսաստանում ազգային խնդիրները դեռևս լրիվ լուծված չեն, որի պատճառով շարունակվում են միջէթնիկական հակասությունները (օրինակ՝ չեչենների և ռուսների, Կովկասի լեռնային ժողովուրդների միջև):

Ռուսաստանը **բազմակրոն** պետություն է. բնակչության գերակշիռ մասը քրիստոնյաներ են՝ ռուսներ, ուկրաինացիներ: Մեծ թիվ են կազմում **մահմեդականները**՝ թաթարներ, չեչեններ, Դաղստանի ժողովուրդներ: **Բուդդայական (լամայական)** ուղղություն են դավանում կալմիկները, տուվացիները և բուրյաթները:

Ռուսաստանի բնակչության կարևոր առանձնահատկությունը նրա **խիստ անհավասարաչափ տեղաբաշխումն** է: Բնակչության ավելի քան 80 %-ը բնակվում է երկրի ավելի փոքր՝ եվրոպական, և միայն 20 %-ը՝ ասիական մասում: Միջին խտությունը մոտ 9 մարդ/կմ<sup>2</sup> է: Մինչդեռ ասիական՝ Ուրալյան լեռնաշղթայից արևելք ընկած վիթխարի տարածքներում 1 կմ<sup>2</sup>-ին միջինը ընկնում է 1 մարդ, Սիբիրի կենտրոնական շրջանում՝ մի քանի հարյուր կմ<sup>2</sup>-ին՝ 1 մարդ: Միևնույն ժամանակ Մոսկվայի ագլոմերացիայում այդ ցուցանիշը գերազանցում է 330 մարդ/կմ<sup>2</sup>:

**Քաղաքներ** Ռուսաստանում հիմնվել են վաղ ժամանակներից: Ուշ միջնադարում Ռուսաստանը համարվել է քաղաքների երկիր: Առավել խոշոր քաղաքները ստեղծվել են գետերի ափերին ու առևտրական ուղիների երկայնքով: Դրանցից են Նովոգորոդը, Սմոլենսկը, Մուրոմը: Հետագայում քաղաքներ ստեղծվել են Ռուսաստանին միացված նոր տարածքներում ու ծովափերին (Պետերբուրգը՝ Բալթիկ ծովի, Վլադիվոստոկը՝ Ճապոնական ծովի ափին):

Այդուհանդերձ, անցյալ դարի սկզբին, մինչև 1917թ. խորհրդային իշխանության հաստատումը, Ռուսաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը բնակվել է գյուղերում: Ռուսաստանը հայտնի է եղել որպես տիպիկ գյուղացիական երկիր:

Խորհրդային տարիներին արդյունաբերության առաջանցիկ զարգացմանը և երկրի ինդուստրացմանը զուգընթաց կառուցվել են բազմաթիվ նոր քաղաքներ, կարուկ աճել է հին քաղաքների բնակչության թիվը: Ներկայումս քաղաքներում բնակվում է Ռուսաստանի բնակչության ավելի քան 73 %-ը, իսկ խոշոր՝ 1 մլն-ից ավելի բնակիչ ունեցող քաղաքների թիվը հասել է 12-ի: Մի քանի քաղաքների շուրջը ձևավորվել են **քաղաքային ագլոմերացիաներ**: Այդպիսիք են Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Սամարայի, Նիժնի Նովգորոդի, Եկատերինբուրգի և այլ ագլոմերացիաները:

Գերխոշոր (1 մլն-ից ավելի բնակչությամբ) քաղաքներից են Մոսկվան (10 մլն մարդ), Սանկտ Պետերբուրգը (4,2 մլն), Նովոսիբիրսկը, Նիժնի Նովգորոդը, Եկատերինբուրգը, Սամարան, Օնսկը: